

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ  
Երթակօ, ԻԼԼ.

Տարեկան Տեղեկագիր Հովիւին- 1970

Միրելի ծխականներ,

1970 տարւոյ ընթացքին, Աստուծոյ կամքով եւ մեր եկեղեցւոյ կից կազմակերպու-  
թեանց զործակցութեամբ ու մեր ժողովուրդին նիւթական եւ բարոյական աջակցութեամբ,  
կաարեցինք հետեւեալ զործերը:

Ս. ԳԱՏԱՐԱԳ մատուցինք ամէն կիրակի, ճրագալոյցի, Ս. Ստեփանոսի կամ Ամերիկեան Եր-  
նունդի, Յունվ. 6, Հայկական Նոտենդի, եւ եկեղեցւոյս Անուանակոչութեան առթիւ:  
Մեծ պահոց ընթացքին Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւն ունեցած ենք: Զարո-  
գաբոսութիւնը եղած է Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:

ԵՈՐՀՐԴԱՅԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ունեցած ենք ըստ հետեւեալին:

Մկրտութիւն՝ 5, Գսակ՝ 4, Թաղում՝ 10, Ս. Հաղորդութիւն հիւանդաց՝ 6:

Այցելութիւններ կաարած ենք մեր ծխականներուն ըստ պետ, աղօթած եւ միխթարած  
ենք զիրենք. մասնակից ըլլալով անոնց ուրախութեանց եւ տխրութեանց:

27 այցելութիւն տուած ենք հիւանդաց տուները:

47 այցելութիւն տուած ենք հիւանդաց հիւանդանոցները:

22 այցելութիւն տուած մահերու առթիւ ցաւակցական:

74 տունօրհներ կաարած ենք:

6 զերեզմանօրհներ:

226 Հովուական այցելութիւններ:

Ընդամենը 404 այցելութիւններ:

ԿԻՐԱԿՆՅՈՐԵԱՑ ԳՐՈՅԸ ուրախ ենք ըսելու որ լաւ եւ կարող ձեռքերու մէջ է: Տիկ.  
Ֆլօրէնս ժանսիկեան ընդառաջելով մեր հրաւերին, ստանցած է Տեսչութեան պաշտօնը,  
եւ զիտակցօրէն կը վարէ իրեն վստահուած նուիրական զործը, իրեն կողքին ունենալով  
իւրմբ մը անձնուրած եւ հաւատարմ ուսուցչական կազմ մը:

ՀԱՏՆԵՐԷՆ ԼԵՂԻՒ ԳՐՈՅ.- Ինչպէս կը յիշէք այս հարցի մասին մասնաւոր ժողովի հրա-  
ւիրեցինք բոլոր եկեղեցւոյ կազմակերպութիւնները եւ հետաքրքրուող անձերը եւ ջա-  
նացինք կարգադրութիւն մը ընել որպէս զի հայերէն լեզուի դասաւանդութիւնները շա-  
րունակուին: Ժողովին մէջ մեզի առաջարկուեցաւ եկեղեցւոյս Թերթիկին միջոցաւ, նա-  
մակով դիմել ծնողներու ստուգելու համար թէ հայերէն դպրոց կ'ուզեն եւ թէ իրենց  
զաւակները պիտի ընդունեն: Ոչ իսկ մէկ հոգի պատասխանեց մեր այդ նամակներուն:  
Յաւով կը յայտնենք որ հայերէն դասերը դադրած են:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԱԵՏԱԿՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ որոնք ունինք, Տիկնաց եկեղեցասիրաց Միութիւնը,  
Երիտասարդ Տիկնաց Միութիւնը, Դպրաց Դասը, Կիրակնօրեայ Դպրոցը, եւ Արիտասարդաց  
Կազմակերպութիւնները, նուիրուած եւ զործօն աշխատանք կը կաարեն:

ՃՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՀՐԱՆՊՈՒՄԱՐՆԵՐ.- Ներկայ եղած եւ թեմական Գաղափարական եւ Անդեղական համալսարաններուն ի ֆիլաւելֆիա: Միտ Վէսթի Հայց. Անդեղներու շրջանային ժողովներուն, նախագահի հանգամանքով 1970-1971 տարեշրջաններուն համար: Նաեւ Միտ Վէսթի Անդեղականաց հերթական ժողովներուն:

Մամեսկցած եւ Անդեղեւոյս ծխական եւ վարչական բոլոր ժողովներուն եւ հսկած եւ որ անոնց գործերը կատարուին ըստ Հայց. Անդեղեւոյ կանոնադրութեան:

Ներկայ եղած եւ աւուր պաշտօնի մասնակցութիւնս բերած համայնքային 67 զանազան ձեռնարկներու եւ հաւարոյթներու: Ասոնց վրայ կարելի է աւելցնել Մկրտութեանց, եւ ամուսնութեանց առթիւ ընդունելութեանց եւ մահերու առթիւ հոգեմաշներու:

ԵԿԵՆՅԵՐՈՅ ԲԱՐՏՁԱՐԴՈՒՄԸ կը շարունակուի, արդէն պատուհաններուն եւ դռան զուխաւոր աշակիներով զարդարանքը վերջացած է: Շուտով հաւիայէն կ'ստանանք ՎՄԲԻՆ ԸՆԹԻՔԸ քանդակուած մասնաւոր փայտի վրայ, զետեղելու համար Ս. Անդանին աղջնի մասին վրայ:

ԿՈՍՄԱՌՈՐԻԶ ԹԱՐԹՈՒՆԸ կը շարունակենք հրատարակել երկու լեզուներով, տեղիակ պահելով մեր ժողովուրդը Անդեղեւոյ անց ու դարձերուն: Անգլերէն մտքնագրումը կը կատարէ Տիկ. Եօլին նահապետան, Հայերէն մտքնագրումը եւ կ'ընենք ըզմագրումը եւ կազմումը կ, ընեն Տիկիններ Ալիս Ժօրժ եւ Մարմի Սարգիսեան: Նամակաւան յանձնումը եւ առաքումը կը կատարուի իմ կողմէս:

ԳՐԱՍՆՆԵԱՍԻ ԳՈՐԾԵՐԸ կը կատարենք կանոնաւորաբար: Նամակազրութիւններ, արձանագրութիւններ, թղթակցութիւններ եւ յայտարարութիւններ կատարուած են ժամանակին եւ մասնաւոր առարկաներու մէջ ամփոփուած:

ԵԿԵՆՅԵՐՈՅ ՆՈՒՐԱՆԱՆ ՎԻՇԱԿԸ դարձած է ինքնաբաւ եւ նախնական վիճակի մը: Այդ մասին պիտի լսէք Նիւթական տեղեկատուութեան ընթերցումին: Ըէ պահեստի դրամը աւելցած է եւ թէ մեր բոլոր պարտքերը վճարելէ վերջ, պարտաստի շէրի հաշուոյն ունինք ըստական զուտար:

- ԱՇԵՆԼԱԻ ԵԿԵՆՅԵՎՈՒՄՆԵՐ ՈՒՆՆԵՄԱՆ ԳԱՄԱՅՆՔՆԵՐ ՆԵՐԱ 1970Ի ԸՆԹԱՅՐԻՆ:
- Ամենապատիւ Տ. Շնորհք Արք. Գալուստեան, Թուրքիոյ Հայոց Գաղիարքը:
- Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Թեմիս Առաջնորդը:
- Հոգեշ. Արշէն Վրդ. Այվազեան-Գաւարազիշ- Գաղիարքին զաւագանակիրը:
- Հոգշ. Ասկան Ա. Վրդ. Գալիարեան-Առաջնորդի փոխնորդ Աւսարալիոյ Հայոց:
- Հոգշ. Վարուժան Ե. Վրդ. Գալարամեան, Էկլէնսթեէն:
- Հոգշ. Վազգէն Վրդ. Թաթոյեան, Վորիկընէն:
- Հոգշ. Վազգէն Վրդ. Ռէշիշեան, Սաուր Միլվորիէն:
- Արժ. Ռուբէն Քհն. Մարտիրոսեան, Երևանէն:
- Արժ. Յովհաննէս Քհնյ. Մարուբեան, Եջմիածնէն:
- Արժ. Գրիգոր Քհնյ. Հայրապետեան, Սուր Միլվորիէն:
- Արժ. Բարի Քհնյ. Մէթոնեան, Վէսթ Ելիսէն:
- Հոգշ. Օշին Վրդ. Նիկոլեան, Զուլիցերիայէն:

ՕՌԱՆԱՍՏՐՈՒԹԻՒՆ ՀՈՎԻՏՆԵՐՈՒ.- Վէսթ Բուլմընի ծխական Խորհուրդի հրաւերով եւ մեր հոգաբարձութեան հաւանութեամբ, փոխանակութիւն կատարեցինք եւ Արժ.Տ.Գրիգոր Զհնյ. Հայրապետեան մեր սկեղեցին պատարագեց իսկ ես ալ Ս.Յովակիմ եւ Ս.Աննա սկեղեցին: Կիրակի Ապրիլ 12-ին:

Յունիսի 7-ի Կիրակին իսկ Սէնթ Լուիզի Ս. Եղակաթ սկեղեցին հրաւիրուած էի պատարագելու: Երկու ծխական Խորհուրդներու կարգադրութեամբ գացի:

ՏԵՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Արժանավայել կերպով տօնեցինք մեր ազգային եւ այլ տօները. վարդանանքը, նահատակաց Տօնը, Յիշատակութեան Օրը, եւ սկեղեցւոյս Օծման արեւդարձը: Ունեցանք բանախօսներ թէ մեր զաղութեն եւ թէ Հայաստանէն:

ՅԱՆՉՆԱՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Կը փափարիմ ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալ կարեւոր կեանքը առ ի զործադրութիւն:

Նկատելով որ սկեղեցին նիւթական ապահով վիճակի մէջ է եւ նկատելով որ անդր-նիս նեղ է, կ'առաջարկեմ,

- 1.- Գնել սկեղեցւոյ քովի տունը, Կիրակնօրեայ դպրոցի եւ այլ պէտքերու զործածութեան համար:
- 2.- Բաշրին Լօթին վրայ կարուցանել երկու Օթոյի համար կարած մը. թէ սկեղեցւոյ Օթոյի նոր պահուելուն համար եւ թէ ալ սրահներուն եւ սննեակներուն մէջ գանուող կարգ մը առարկաներ հոն պահելու համար:
- 3.- Ապահովել սկեղեցւոյ համար մնայուն տնտես մը:
- 4.- Նկատելով որ սկեղեցւոյս անդամ այրերը շատ զործօն շնն սկեղեցիէն ներս, կ'առաջարկեմ սկսիլ 'Մէնզ Գլըպ' մը:

Վերջացնելէ առաջ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել սկեղեցւոյ կից կազմակերպութեանց անդամներուն, վարչականներուն, սարկաւազներու, թերթիկին օգնողներուն, եւ բոլոր բարեպաշտ ու ազնիւ անձներուն որոնք բարոյապէս ու նիւթապէս օգնեցին սկեղեցւոյ զործնելուն եւ ինձի, Աստուծոյ փառքին եւ սկեղեցւոյ պայծառութեան համար:

Սա ձեզի համար միշտ աղօթող եմ. Գուր ալ ինձի համար աղօթեցէր որպէս զի առողջ մնամ եւ ձեր մէջ ու ձեզի հետ աշխատիմ մեր Ս.Սկեղեցւոյ համար:

Աստուած օրհնէ բոլորդ:

Սարգիս Զհնյ. Գաշրգճեան  
Յունվար 8, 1971  
Երեւան, ԻԼԼ.